



Էլիբեկյանի արվեստը հատկորոշվում է կնոջ գեղեցկության առեղծվածի վերծանման, բացահայտման, ցուցադրման աստվածաշնորհի վարպետությամբ: Կին էակի պատկերի մեկնությունը Էլիբեկյանի վրձնի նախասիրած հիմնական ժանրային աշխարհն է, որով եւ արտացոլվում է նրա հոգու ողջ էությունը: Կինը նրա կտավներում՝ լինի պատուհանի մոտ կամ մի շքեղ կամարի ներքո, ընդմիշտ դուրս գալու, ազատագրվելու պատգամ է հաղորդում դիտողին, որը զուտ էլիբեկյանական վրձնի յուրահատուկ խորքն է: Նրա կերպարները հավերժ կանացիության, անաղարտ գեղեցկության ու հմայքի մարմնացում են, որոնցից ասես լույսն է անդրադարձվում, որոնք միշտ ջահել են ու երջանիկ, միմյանց արտաքուստ նման, սակայն էությամբ անսահմանորեն տարբեր:

Այսպես, պատկերելով դիմանկարներ, գեղեցիկ պարուհիների հարդարանք բեմելից առաջ, բեմին կամ բեմեզրին, կրկեսային տեսարաններ, մարդկային լուռ ու խորհրդավոր հանդիպումներ, մտերիմ զրույցներ, բիբլիական մոտիվների գունանկարչական մնջախաղ այս կամ այն թեմայով՝ Էլիբեկյանը ստեղծում է հանդիսանքի իր աշխարհը, ուր իշխում է երեւակայության կենդանի տոնախաղը, թռիչքը, ստեղծագործելու հավերժ ու մշտապես նորացող արդիական եւ ավանդական բերկրանքը: Կան կտավներ էլ, որ նման են կյանքին, որով Էլիբեկյանը ցանկանում է, որ կյանքն էլ նման լինի դրանց, եւ դիտողն ասես հաճույքով կիսում է նկարչի այդ ցանկությունը: Եվ այստեղ նույնպես Էլիբեկյանի երանգապնակից ծնվող կտավները մերթ եթերային ու թափանցիկ թեթեւություն ունեն՝ ասես նման լինեն ջրի վրայով սահող հովի քնքշության, մերթ ճոխ ու բազմագույն են՝ լույսի եւ տարածության խտացումով ու ծավալվող գույների երանավետ խորությամբ, գունապատկերների նրբազգաց հարաբերումներով Էլիբեկյանի արվեստում որոշակի տեղ ունի նաեւ դիմանկարի ժանրը, ուր փայլուն գեղանկարչությունը զուգորդվում է կերպարի հավաստիությանն ու ազգային ավանդույթները կրող ընդհանրացումների ձգտումին: Թատրոնին մի առանձնահատուկ տեղ է հատկացնում Ռ.Էլիբեկյանի դերը ստեղծագործական տեսահորիզոնում: Եվ քանզի Էլիբեկյանի արվեստի ակունքները մեծապես ազդվում են օպերայի ու թատրոնի աշխարհից, ուստի արվեստագետը, այս ասպարեզում էլ կրկին փորձություններն ու գայթակղությունները հաղթահարած, որպես մի առանձնահատուկ ստեղծագործող, կատարել է բազում նրբաճաշակ բեմանկարչական ձեւավորումներ: Էլիբեկյանական վրձնի պատկերած թատրոն-նկարի առջեւ այնպես է թվում, թե Էլիբեկյանը կամ օպերային թատրոնին հավետ խենթի պես սիրահարված գեղանկարիչ է, եւ կամ էլ թատերագիր ու էլի խենթի պես սիրահարված գեղանկարչությանը, որտեղ այդ չխունացող հմայքից ակամա մոռացվում է կեղծիքն ու սուտը, տգեղն ու չարը եւ, հափշտակվելով ու կախարդվելով տեսածից, վերանալով տխուր առօրյայից, ասես փոխադրվում ես չքնաղ կախարդանքի, հեքիաթի ու երանավետ հույզերի անօրինակ հաճույքի մեջ եւ լիովին վայելում ու ըմբռնվում այն:

Ոճական շրջանները, հաջորդելով միմյանց, տարրալուծվելով, առաջ են մղում հեղինակի վրձնարվեստի հնարավորության սահմանները եւ ընդմիշտ ապացուցում, թե որքան բարդ ու դժվար է ժամանակակից արվեստում ունենալ ուրույն ոճ ու ոճամտածողություն եւ կրել այդ բախտը: Էլիբեկյանի անընդհատ վեհացող ու բյուրեղացող, սակայն անցյալից երբեք չկտրվող արվեստը մեր վերածնված հայրենիքի մշակութային նոր վերելքի դրսեւորումներից է: